

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ

Մեր խոսումներն
ՏՕԲԹ. Վ.Ի.ԳԷՆ ԳԱԼՊԵԱՆԻՆ

Տարիներով, սրբիս մէջ մութ, փալեր եմ սա արեւուն տակ,
Ուր որ դիմեր զրօսեր եմ ես յոյսի բոլոր դրոները փակ.
Հիմա ինչպէս դարձող ծիծառ կը նորոգեմ բոյնըս նորէն,
Գարնան օրով տաք ու պայծառ նոր երազներ պիտի օրենմ:

Տարիներով, իմիններէս իսկ ցաւս գաղտնի ես պահեցի,
Եւ ժըպեցայ մարդոց դէմքին ու մութին մէջ բախտը լացի.
Խաչքս շալկած հասայ մինչեւ Գողգոթայի ես բարձունքին,
Եւ հըրաւելով մահէն պըրծայ վերադարձայ նորէն կեանքին:

Կ'անցնիմ հիմա սա համբայէն չար ու բարի աչքերուն տակ,
Որոնք անցուց իմ երազիս, իմ տենչերուս եւ անգիտակ,
Մարդեր որոնք կը հետեւին ինձ, միասին ալ կը փալենք,
Եւ գուցէ զիս կը մեղքընան, կը մեղքընամ ես ալ զիրենք:

Ու ձայները երբոր դադրին, ինքն ինծի երբոր մընամ,
Կ'անդրադառնամ այս ամենուն եւ լուռ ու մունջ կը զար-
մանամ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

